ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ **Արա Զոհրաբյանի,** անդամներ՝ **Մանե Կարապետյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Սեդրակ Ասատրյանի և Արսեն Սարդարյանի,**

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամն ավարտած հավակնորդների որակավորման քննությունների ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

հաշվի առնելով որակավորման քննության արդյունքներն ըստ ծածկագրերի գնահատված լինելու, ինչպես նաև ծածկագրերին համապատասխանող հավակնորդների անուն, ազգանունների ցուցակները կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 17.09.2014թ. թիվ 26/9-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 7.7 կետի պահանջներով,

միաձայն՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Գնահատել դեոնթոլոգիայի մոդուլի գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Գնահատել քրեական մոդուլից միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 2-ի:

Որոշում N 02-1-Ա

ք. Երևան

07 ապրիլի 2015թ.

3. Գնահատել քաղաքացիական մոդուլից հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 3-ի:

4. Գնահատել քրեական մոդուլից դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները ՝ համաձայն հավելված 4-ի:

5. Գնահատել քաղաքացիական մոդուլից վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր առաջադրանքները՝ համաձայն հավելված 5-ի:

6. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի ցուցատախտակի վրա:

7. Բացել կնքված արկղերը, հանել ծածկագրերի թերթիկները՝ նախապես տեղեկացնելով հավակնորդներին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 02-1-Ա
ք. Երևան
07 ապրիլի 2015թ.